Հավելված
ՀՀ վարչապետի N 660 - Ա որոշման

## «ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

| Հ/Հ | **Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը** | **Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմինը** | **Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը** | **Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառման ֆինանսական ապահովման աղբյուրը** | **Իրավական ակտի ընդունման իրավական հիմքը** |
|---|---|---|---|---|---|
| **1.** | «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման, պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն | 2021 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | «Արտոնագրերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մաս, 9-րդ հոդվածի 1-ին մաս, 40-րդ հոդվածի 5-րդ մաս, 51-րդ հոդվածի 1-ին մաս, 61-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր, 70-րդ հոդվածի 6-րդ և 12-րդ մասեր, 75-րդ հոդվածի 3-րդ մաս, 82-րդ հոդվածի 4-րդմաս և 83-րդ հոդվածի 5-րդ մաս, «Արդյունաբերական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պարունակող գյուտերի, արդյունաբերական դիզայնների գաղտնիության աստիճանի որոշման, դրանց օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման, գյուտի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման, արդյունաբերական դիզայնի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի պաշտոնական տեղեկագրում հրապարակվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին, արտոնագրային հավատարմատարների կանոնադրությունը հաստատելու մասին, արտոնագրային հավատարմատարների որակավորման քննությունների անցկացման, արտոնագրային հավատարմատարների գրանցման, գյուտերի, արդյունաբերական դիզայնների գրանցամատյանների բովանդակությունը, դրանցում փոփոխություններ կատարելու մասին դիմումի ձևերը, | | | | դիզայնի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս, 8-րդ հոդվածի 1-ին մաս, 37-րդ հոդվածի 6-րդ մաս, 47-րդ հոդվածի 1-ին մաս, 50-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր, 56-րդ հոդվածի 4-րդ մաս, 57-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասեր, 59-րդ հոդվածի 3-րդ մաս, 66-րդ հոդվածի 4-րդ մաս, 67-րդ հոդվածի 5-րդ մաս |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | փոփոխություններ կատարելու ընթացակարգը, քաղվածքի ձևը և դրա տրամադրման, ինչպես նաև գրանցամատյանի վարման հետ կապված գործողությունների կատարման, արտոնագրերի ձևը և դրանց մեջ նշվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին, գյուտի կամ արդյունաբերական դիզայնի  լիցենզիաները (այդ թվում՝ ֆրանչայզինգը), դրանց պայմանների հետագա փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումների ձևերը, դրանց լրացման, ներկայացման և քննարկման, գյուտի կամ արդյունաբերական դիզայնի արտոնագրատիրոջ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին դիմումների ձևերը, դրանց լրացման, ներկայացման և քննարկման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **2.** | Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն | 2021 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | «Արտոնագրերի մասին» օրենքի 84-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ մասեր, «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի 71-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասեր |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ — Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

18.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ